

Hentchak:

Organe Central

DU PARTI

HENTCHAKISTE

ՀԱՅԿԱՍՏԱՆ

Journal Arménien

mensuel

XX Année

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՊԱՏՐԱՆՔ ԵՒ ԻՐԱՎԱՆՈՒԹԻՒՆ

Յեղափոխական ամեն շարժումներն այլևս դադար պիտի առնեին, դրանք միայն բացասական և անպտուղ կարող էին լինել, որովհետև Ռուսաստանը հասած էր քաղաքակրթության այն շրջանին, երբ հոկտեմբեր 17-ի մանիֆեստով խոստացուած հաստատութիւնները կիրառութեան մէջ դրուելով, այլևս առանց որ և է ներքին ցնցումի՝ այդ երկիրը կարող պիտի լինէր իրական յառաջադիմութեան շաղի մէջ մտնել և իսկապէս ու պարզ ամեն տակաւն ճանապարհով լուծել այն բոլոր քաղաքական ու անասական խնդիրները, որ կեանքի պայմանները յառաջ կբերէին: Դիպացի, գործաւոր, ամեն կարգի աշխատաւոր այլևս ոչ վտարանջումների կարիք ունէին, ոչ ցոյցերի և ոչ էլ դիմում ապստամբութեան. այսուհետև խօսքը, բանականութիւնն էր որ պիտի դարձաւ հանդիսանալու անելիքի և չանելիքի մասին, ուրեմն հետո՛ւ անհաշտ աներից, հետո՛ւ կարծիքներից, որոնք այդպէս չէին մտածում:—Այս էր, մտաւորապէս, թէպէտ այն կուսակցութիւնների և գործիչների, որոնք իսկապէս վերանորոգութեան կողմնակիցներ էին համարուած իրենց և քարոզում էին իրաւական հողի վրայ կանգնել՝ ամենից առաջ:

Ժողովրդի Ազատութեան Պաշտպան ասուած Կուսակցութեան զիրքը դրանից՝ շատ տարբեր չէր: Նա արդէն գտած էր համարում ազատութեան ճանապարհը, երբ կարելի պիտի լինէր ամեն եռանդ, ամեն գործունէութիւն, ամեն ձեռներեցութիւն անանձ կերպով ասարարել հանել և թողնել որ իրարու դէմ մրցող, իրարու հետ պայքարի բռնուող ոյժերը իրենք վճռէին թէ ո՛րը պոյութիւն պիտի ունենար, որը ո՛չ, ու այդպիսով իրենք պիտի առնէին իրենց կանոնաւոր ընթացքը, տիրէր բնական օրէնքը և հաստատուէր ընկերային ներդաշնակութիւնը:

Այդ բոլորը պատրանք, և ապշեցուցիչ պատրանք էին, որի մէջ ընկել էին ժողովրդի անունով խօսողները, նրանք որոնք ամենամեծ տեսչանք և փափար ունէին ցարիզմի ստեղծած հաստատութիւնները միայն այնքանով լայնացած տեսնելու, որքան որ պէտք էր, որ, իրենք էլ ախրապետոզների շրջանակի մէջը մտնէին

և ընդհանուր շահագործումից առաւ բաժիններ հանէին: Եւ հէնց այդ պատրանքն էր, որ նրանց թույլ չտուեց իրենց ոյժը միացնելու պրօլետարական այն շարժումներին, որ Նորագոյն Ռուսիայի առաջին և ստեղծող աղբակն էին հանդիսացել:

Առաջին և երկրորդ Դումայի արձակումը արդէն եկաւ այն պարզ իրողութիւնը մերկայանելու թէ հոկտեմբեր 17-ի մանիֆեստը, տրուած ճշման ազդեցութեան տակ, երկու բառերի մի կոյտ էր, որ ներքին նպատակ ունէր ցարիզմի ակոյնեաններին միջոց վստասելու տալու, որպէսզի նրանք կարող լինէին ոյժ հաւաքելու հակադիր տարրերին աւելի դիւրութեամբ ջախջախելու և նորէն ցարական բռնաւորութիւնը վերահաստատելու՝ իր ամբողջութեանը մէջ:

Յետագայում թափուած արեան զետախները, համապարկերի զոհերի թիւը, բանտերը, արքայազները, դատարանների ոճիրները — այդ բոլորը վկաներ եղան հաստատելու համար թէ ցարիզմի գաղափարաբանները ուրիշ ոչ շարժառիթներ ունեցած չէին եղել:

Յարկիմը դրանցով զալիս էր նորից ամբայնելու այն գաղափարը, թէ բռնապետները անուղղայ են և նրանք տեղի կարող են տալ միայն գահալիծումով:

Եկաւ երրորդ Դուման: Ստոյիպինը համարձակօրէն այլևս կարող էր ասել — ահա՛ իմ Դուման. որովհետև ամեն ինչ կարգադրուած էր վերելից չափուած ու ձեռնածի համաձայն: Իսկական Ռուս մարդ, չինովնիկ, կալուածատէր, կապիտալիստ, ֆինանսիստ, ազնուական հին Ռուսիայի այդ բոլոր շահագործող տարրերը մէկտեղ էին հաւաքուել իսկուրձ կողմերու համար նոր Ռուսիայի դէմ: Երրորդ Դուման. դա ֆրանսիական Կոմիսնարի այն ձախիւնն էր, որ եկած էր անասու և կատարելու այն բոլորը, ինչոր վերելից թելադրուած էր: Երրորդ Դուման՝ դա ստրուկների այն խառնիճաղանձութիւնն է, որ սովոր է մէջքը ծռել ցարական կնուտի առաջ, որովհետև հէնց այդ կնուտն է իրեն միջոց և դորութիւն տալիս իր արտօնութիւնները պահելու և իր շահագործութիւնները առաջ վարելու: Երրորդ Դուման, — դա մի ճախճախուտ է, լի ամեն տեսակ բժժանքներով, որոնք կազմում են ցարի բռնակալութեան որդակերուած միջուկը: Ու նոր Ռուսիայի երիտասարդ ոյժերը, ծալրագոյն ձախը, Սոյիալ-Դեմոկրատները, Ռուսական յեղափոխութեան այդ իրական

ապրիլները այնտեղ մտան, որպեսզի ընդհանրաթման, հետևությունների հաշվարկից ծածկող քողը կրեմն կրեմն վեր բարձրացնեն և ի լուր աշխարհի յայտարարեն թե, ահա ձ ա ի ի ն ր, որի արտաքինից չպետք է խաբուրել:

Հարցրեք, այսօր, բանիբուն ամեն օրենսդատի, ամեն իրաւագետի թէ՛ քաղաքական ի՞նչ կաղձ ունի այժմս Ռուսաստանը: Իրեք այդ հարցը և՛ ձախիճի ներկայացուցիչներն առաջ: Ապահովաբար ո՛չ մի զրական պատասխան կարելի է ստանալ: Եթէ մէկը Դուժա անունից մակաբերելու լինի թէ Ռուսաստանի մէջ հին բէժիմը տապալուած է, — իրական փաստերը կու՞ն կերպով կրան հաստատելու, որ այդ երկրի մէջ ոչինչ փոխուած չէ, Ռուսաստանը արդեամբ նոյնն է, ինչոր 1905 Հոկտեմբերի 17-ից առաջ: Այդտեղ ո՛չ թէ Սահմանադրութեան նշույլ անգամ չկայ, այլ բ ա ց ա ը ձ ա կ ա պ ե տ ու թ ի լ ի լ ն է իր բոլոր իրաւունքներով թագաւորուած է անկաշխանդ կերպով. երբ մի բէժիմ ինքնակալական է, ապա սահմանադրական չի կարող լինել, ընդհակառակը՝ սահմանադրական երկիրը միաժամանակ չի կարող լինել և՛ ինքնակալական: Ու երբորդ ձախիճ Դուժան սուրբ-փառք եկաւ հռչակելու, հաստատելու որ Ռուսաստանը քաղաքական մի բէժիմ ունի այժմս, որ ա ն ա ն ու լ ն չունի, այսինքն Ռուսիայում ներկայումս տիրում է ա ն ա ն ու լ ն բէժիմի դրութիւնը:

Ու այդ ա ն ա ն ու լ ն դրութիւնից իր վերջնական նպատակների համար օգտուողը միայն ցարիզմն է, որ հաւաստիացնում է, թէ մոսկովեան բացարձակապետութիւնը բարձր ի պոլիս թագաւորում է, ուրեմն և պատրանքի մէջ չպետք է ընկնել:

Միակ տարբերը, որ իրերը կանխապէս տեսել և գնահատել էին իրանց իսկական արժեքի մէջ — դրանք եղած էին պրօլետարական կուսակցութիւնները, իրենց բոլոր ստորաբաժանումներով: Ու այդ նրա համար, որ նրանք կանխած էին եղել իր ա կ ա ն ու թ ե ա ն վրայ:

Զննենքով ո՛չ մի պատրանքի մէջ, չլուսադրուելով վերեւից եկած որ և է մի խոստումից, դասակարգային կոիւր և այդ կուռի հետևանքը եղող հոգեբանութիւնը հիմունք ընդունելով՝ նրանք իրենց շարունակական նշանաբանն էին արած Հ ի մ ն ա ղ ի ը Ժ ու ղ ո վ: Մինչև որ չգումարուէր Հիմնադիր Ժողովը՝ անկարգի պիտի լինէր արձատական փոփոխութիւն սպասել, և է՛ն էլ խաղաղ ճանապարհով: Հիմնադիր Ժողով, — դա սակ էր նախ ջախջախուած տեսնել հին Ռուսիայի բոլոր ոյժերը: Հիմնադիր Ժողով, — դա կնշանակէր տիրապետող ծան և իր նեցուկը հանդիսացող դասակարգերի վերջնական տապալումը: Հիմնադիր Ժողով — դա նորագոյն Ռուսիայի անկաշխանդ խօսքը պիտի լինէր՝ երկրին տալու քաղաքական և տնտեսական այն կայմը, ինչոր համապատասխան էր իրերի իսկական արհեստին:

Այդպէս էր, եղած ուղին, որով ընթացել էին յեղափոխուող ժողովուրդները: Ու պրօլետարիատը, նրա գաղափարաբանութիւնը ներկայացնող ոյժերը ուրիշ ոչինչ չէին ասում, եթէ ոչ բռնել այն բնական ճանապարհը, որով գնացել էին քաղաքակրթապէս առագաղթն ժողովուրդները:

Ու եղաւ այն, ինչոր դժուար չէր կանխատեսելը թէ պիտի լինէր: Յարիզմը խոստումներով արբեցողներին ինքը առաջինը աքաղին տուեց և նրանց վեր հանեց իրենց արբեցողական դրութիւնից, իրենց պ ա տ ա ն ք ի յ:

Քաղաքական ա ն ա ն ու լ ն կացութիւն, — բայց ո՛վ է խաբուողը: Ու երբորդ Դուժան ինքը առաջինը կասի, որ դա Ռուսական այն բռնապետութիւնն է, որի սահմանների մէջ ապրող ժողովուրդները Ռոմանովների ս ե պ հ ա կ ա ն ու թ ի լ ի լ ն են նկատուած և որոնց հետ այդ ծունը կարող էր վարուիլ իր ուղածին պէս:

Ռուսաստանի մէջ իրական փոխուած ոչինչ չկայ: Ամբողջ երկիրը սովի, սրածուծեան, թշուառութեան, անասնձ կամայականութեան է մատնուած: Ստիկանական և կառավարական վաշտաբռնութիւնները տիրող օրէնքներ են: Օրէնք ասելով պէտք է հասկանալ գէներալ-նահանգապետների և ժանդարմերիական շէֆերի կամքը: Մամուլ, ազատ խօսք, անհատական իրաւունք, ժողովրդական ամէն հակալիշիւ ձայն խեղ-գուած է, — բռնութիւնը համատարած է:

Ե՛րբ է որ Ռուսաստանը իր կապանքներից ազատ կլինի և իր անկաշխանդ տէրը կհանդիսանայ, — այն ժամանակ, երբ կգումարուի Հիմնադիր Ժողովը:

Ու որպէսզի այդ Ժողովը գումարուի, դրա նախապայմանն է որ ցարական բոլոր ոյժերը արձատախիլ լինին: Իսկ այդ կլինի ո՛չ թէ ա ն ա ն ու լ ն դուժանների, այլ փ ո ղ ո ց ն ե ը ի մէջ: Մինչև որ չեղափոխական ոյժերը, սուրը ձեռքին, յաղթող չհանդիսանան և տիրապետող դասակարգը ու նրա հիմնաքարը եղող ծանր չափակեմ կառավարողի ճանապարհը բռնել, — իսկական ազատութիւն սպասելը պատրանքի մէջ ընկնիլ ասել է:

Եւ ո՛վ պէտք է լրացնի պատմական այդ շրջանադարձ գործողութիւնը: — Պրօլետարիատը, որովհետեւ Ռուսական յեղափոխութեան շարժիչ լծակը նա է եղած:

Այդ գիտէին ցարիզմի ոյժերը, և ահա թէ ինչու իրենց բոլոր թոշնը թափեցին այդ դասակարգի և նրա գաղափարաբանների վրան: Մարդկային պատմութեան մէջ եղակի դէպք էր՝ մի կուսակցութեան ներկայացուցիչներին բանտերի և ամսանակիր աշխատանքի մէջ մաշելը միայն նրա համար, որ Բռնապետի իրա հիմնած ժողովատեղին էին եկել և այնտեղ աշխատել պաշտպանելու այն սկզբունքները, որոնց հիման վրայ որ ընտրուել էին նոյն այն ժողովրդից, որին այդ Բռնապետը ընտրելու իրաւունք էր տուել:

Ու սակայն մի՞թէ դէպի գործաւոր դասակարգը

կատարուած այդ բոլոր եղեւնափորձերից չեւոյց մարկը իրեն ապահով կարող է դառնալ վերջնականապէս . — երբէք :

Երբ գործաւոր դասակարգը իր լքուած ոյժերը կը վերակազմուի, երբ պրօլետարական ոգին նորից կբարձրանայ, այն ժամանակ նա իր շարքերը կսեղմէ աւելի կուռ կերպով և իր յետևից քարշ տալով ամէն կարգի աշխատանքներին ու ընդդիմադիր ոյժերին՝ զինու ընդհանուր ապստամբութեան դռշը կբարձրացնի և ամենքը միատեղ զրոհ կտան Բռնակալութեան այն հաստատութիւններին վրան, որ պատմութիւնը և քաղաքակրթութիւնը վաղուց դատապարտել է և ուսի մի գործող ցնցումի է կարօտ յաւիտենական իր փրկութեան համար :

Չինու ապստամբութիւն, — այսուհետեւ սա պիտի լինի մեր նշանաբանը, որովհետեւ այդ է անխուսափելի դարձրել իր ա կ ա ն ու թ իւ ն ը :

ՀԱՄԵՐԱՇԽԱԽԹԵԱՆ ԳՐԱԿԱՐԳԵՐԻ ԶՈՒՐԶՐ

Համերաշխութիւն (solidarité) բառը մեր մէջ շատ տարբեր կերպով է հասկացուած, ուստի և շփոթութիւնների տեղից տալիս : Հարկաւոր է խնդրել որքան կարելի է պարզ դնել, որպէսզի հնար եղածին չափ մթութիւններից խոյս տրուի :

Եւրոպական ժամանակակից շատ հրապարակախօսներ և պետական յայտնի անձնաւորութիւններ, բոլորն էլ բարձր ժողովրդական երանգին պատկանողներ, վերջերս յաճախ դառնում են Համերաշխութեան Գաղափարի շուրջը, ի հարկէ դա մի որոշեալ նպատակի համար է և ունի իր խորը շարժաւթիւնները :

Այդ կարգի մտածողները տեսնում են թէ ինչպէս Սօցիալիստական Գաղափարը մեծամեծ նուաճումներ է անում ո՛չ միայն պրօլետարիատ և միջին դասակարգերի մէջ, այլև նրա յաղթական հոսանքը աներկբայելի է և՛ ազատ ստակարգականների ու՛ մտաւորականների մէջ . — ուսուցիչներ, ուսուցչապետներ, փաստաբաններ, գրադէմներ, բանաստեղծներ . . . խմբերով է որ սօցիալիզմի գիրկն են նետուած : Այն հաստատութիւնները, որ բուրժուական կարծում էր թէ իր անառիկ ամրոցները պիտի լինէին . ընդհակառակը, նրանք ամենից աւելի երերացին Սօցիալիզմի խաղաղքի առաջ :

Եւ ահա սօցիալիզմի յառաջնադարձից դարհորում, բուրժուա. մտածողների մի առանձին խումբ, արտօնեալ դասակարգի իրական շահերը պաշտպանելու տեսակէտով, կազմել է մի շօլա, գաղտը, որ յայտնի է Համերաշխականներ (solidaristes) անունով :

Ի՞նչ է ասում սօցիալիստական սկզբունքների վրայ կանգնողը, — այն՝ թէ ամէն ընկերութիւն կազմուած է երկու դասակարգերից, որոնք իրարու հակադիր են թէ՛ քաղաքականապէս և թէ՛ տնտեսապէս : Ո՛չ միայն շահերի փոխադարձ հակադրութիւն, այլ նրանց մէջ կայ դասակարգային կռիւ, որը և կազմում է այդ ընկերութեան պատմութիւնը : Ու բուրժուական ներկայ կազմը վերլուծելով՝ սօցիալիստական թէօրիան ցոյց է տալիս թէ ինչպէս ԿԱՊԻ-

ՏԱՆԻ և ԱՇԽԱՏԱՆՔԻ միջև համերաշխութեան որ և է, երբ չի կարող լինել, որովհետեւ երկուսին բաժանող վիճը անսցանելի է, և խակական սօցիալիստը այդ վիճը թէ պետք է ճշտի և թէ՛ պետք է լայնացնի՝ դասակարգային դիտակցութիւն արթնցնելով :

Համերաշխականը ճիշտ դրա հակառակն է քարոզում : Ամէն մի ընկերութեան քաղաքական իրաւունքների լայնացումից օգտուել են բոլոր անդամները, թէև մէկը աւելի, միւսը պակաս, բայց ամէնքն էլ շահուել են ստեղծուած նոր դրութիւնից : Մի թէ 1789-ի ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնը բարիքներ չի բերել թէ՛ գիւղացուն և թէ՛ գործաւորին : Մի թէ մէկի ունեցածից միւսը չի օգուում — գործարանատէրը դնում է իր կապիտալը, կարճատեսքը՝ իր հողը, իսկ գործաւորը և գիւղական աշխատաւորը իր բաղադրները, և արդիւնքից երկուսն էլ օգտուում են, ուրեմն ո՛չ թէ դասակարգային կռիւ, այլ հաճեալ աշխուժութիւն, Կապիտալի և Աշխատանքի համակարգութիւն (coordination), — ահա՛ համերաշխականների թեզը :

Պարզ է որ այս թեզը ուղղուած է սրբօրոտարների դէմ և նպատակ ունի նրանց դասակարգային գիտակցութիւնը մթաղանցնելով՝ մի կերպ պահպանել ներկայ արտօնեալ դասակարգի տիրապետութեան և Հաճադործութեան իրաւունքը : Մեր ասած Համերաշխական Գաղափարը այս տեսակէտից չէ և խնդրի այս մասի հետ որ և է կապ չունի :

Մենք դասակարգերի գոյութիւնը և նրանց փոխադարձ կռիւների թէօրիան ընդունում ենք որպէս հիմունք մեր բոլոր ասած-խօսածների, ու այնպէս էլ՝ չի կարող լինել :

Համերաշխութիւն բառը ուրիշ մի շփոթութեան տեղիք էլ է տուել մեր մէջ :

Համերաշխութեան գաղափարը դնելով շատերը գործութեամբ հասկանում են կուսակցութիւնների իրարու մէջ ձուլումն, մ է կ դառնալը . «բոլորս էլ մէկ սիրտ, մէկ հոգի լինինք, քանի որ բոլորս էլ մէկ գործի՝ համար ենք աշխատում և միևնույն թշնամին ունինք» — այնպէս են համոզուած մեր մէջ եղած Համերաշխականներից շատ շատերը :

Մեր ասած Համերաշխութիւնը դրա հետ էլ կապ չունի և մենք չենք որ այդպիսի անհիթթ մտածումների որ և է ոյժ կտանք և պաշտպան կհանդիսանանք :

Մենք ասած և ասում ենք, որ Քաղաքական Կուսակցութիւնների գոյութիւնը արհեստական բաղկացութիւնների արդիւնք չեն, նրանք հետեւանք են մի ընկերութեան օրգանական կեանքի, — այնտեղ՝ ուր կայ դասակարգ, ուրեմն և՛ քաղաքական ու տնտեսական կռուի ձեւեր, այնտեղ էլ կը լինին քաղաքական կուսակցութիւններ :

Քաղաքական կուսակցութիւնները չեն որ ընկերութեան մէջ յառաջացնում են խտրականութիւն և շերտաւորումներ, ընդհակառակը՝ նրանք արդիւնաբար են արդէն գոյութիւն ունեցող խտրականութիւններին և շերտաւորումներին : Քաղաքական կուսակցութիւնները միայն եղածը աւելի պարզում, լուսաբանում և արտայայտութիւն են տալիս :

Սեղմ կերպով՝ ամէն քաղաքական կուսակցութիւններ յառաջադիմող մի կեանքի յայտարար նշաններ են : Ուրեմն այդ մասին ո՛չ ողբալու հարկ կայ, և ո՛չ էլ «մի սիրտ, մի հոգի լինելու» թէօրիան պաշտպանութեան խնդիր, քանի որ ո՛չ իրականութիւնը կարելի է ջնջել և ո՛չ էլ յառաջագիծող կեանքը կասեցնել :

Ի հարկէ երբ մենք ասում ենք կուսակցութիւն, գալիսի հակառակ իր քաղաքական լայն առումով :

Կուսակցութիւնների դաւանած սկզբունքների մէջ պետք է լինեն անվերաճելիութիւններ, որպէսզի մի կուսակցութիւն գոյութեան իրաւունք ունենայ՝ միւս կուսակցութեանց հանդէպ . այնպէս՝ կուսակցութիւն չեն կարող նկատուել անձ-

նախորդներին առթիւ եղած զանազան բաժանումները և խմբակցութիւնները:

Ուրեմն, Համերաշխութիւն՝ իսկական կուսակցութիւնների ջնջումն և նրանց իրարու ծիծառ անուամբ ասել չէ:

Մեր ձեռք Համերաշխութեան գաղափարի մասին մի ուրիշ տարօրինակ կարծիք էլ կայ: Շատերը այն համոզումն ունեն, թէ Համերաշխութիւն կարելի է կազմել միայն համահման սկզբունքներ և տաքսիկա ունեցող կուսակցութիւնների ծիծառ, — ինչոր շատ սխալ է: Եթէ երկու կուսակցութիւններ լինէին, որոնք նոյնութիւն կազմէին սկզբունքների և տաքսիկայի տեսակետից, այլևս նրանց ձեռք ո՛չ թէ Համերաշխութիւն, այլ ձուլումն, միացումն կլինէր: Խորող պատմէշները ինչքան էլ բարձր լինէին, դարձեալ կեանքը, այդպիսի պայմաններ ներկայացնող կուսակցութիւնների ծիծառ ամէն ինչ կհարթէր, կհաւասարացներ և յառաջ կբերէր միատարրութիւն, այսինքն ձուլումն:

Ուրեմն՝ Համերաշխութեան պարագան բացառապէս չպիտի վնասուի կողմերի դաւանած սկզբունքների համանմանութեան կամ նոյնութեան ձեռք:

Համերաշխութիւն ասելով մենք հասկանում ենք ընդհանուր գործակցութիւն (coopération), այս եզրի քաղաքական իմաստովը վեր առած: Եւ այդ տեսակետից՝ Համերաշխող կողմերի համաձայնութեան և գործակցութեան պայմանները պէտք է որոնել մեր ձեռքում և շօշափման այն կետերի ձեռք, որ ապիւյ է ինքը կենդանի կեանքը, այն կեանքը՝ որի հետ ամէն կուսակցութիւն գործ ունի, որից որ նա ստանում է իր կենսականութիւնը և որն էլ կազմում է իր գործունէութեան ասպարէզը. ուրիշ խօսքով՝ այն ընդհանուր միջավայրը, որ ստեղծել է կուսակցութիւնների գոյութեան պայմանները:

Առնենք մեր կեանքը, ի հարկէ աւելի յեղափոխական քան իրաւական, և այդ տեսակետով մասնաւորապէս ծառիւն Հայաստանը:

Անուրանալի է, որ մեզանում մի տոտար, շատ ստուար թիւ չէ զոք ներքին կայ: Յեղափոխող մի ժողովրդի ձեռք ո՛չ միայն յեղափոխական տարրը գերակշռութիւն պիտի կազմի, այլ բացարձակ մեծամասնութիւնը պիտի լինի: Մինչդեռ մեր ձեռք բոլորովին դրա հակառակն է: Մեզանում յեղափոխականների և չեղոքների ծիծառ համեմատութեան և ո՛չ մի եզր կարելի է գտնել, ա՛յնքան որ չեղոքները ջախջախէ մեծամասնութիւն են կազմում: Ո՛ր մաղաշատ քաղաքը կամ գիւղը կուզէք վեր առէք, նոյն իսկ արտասահմանի ձեռք, և կը տեսնէք որ յեղափոխականները կարելի է միայն մասների վրայ համընկ, մինչդեռ անդին չեղոքների ահագին լեգէոններ կան՝ անկազմ, անկերպարան: Բոլոր չէ զոք ներքին համար անխոր չէ կարելի ասել թէ նրանք հակաշփոխական և ահա կան ներքին կամ անտարբերներ: Ո՛չ: Շատերը չէզոք են, որովհետեւ գործող կուսակցութիւնների և նրանց գործելակերպերի վրայ լիակատար վստահութիւն չունին: Եւ նայեցէք, որ այդ անվստահութեան խնդիրը յարուցանողը ո՛չ միայն մեր գոհ բուրժուա դատակարգն է, որ իր ընկած տեղն էլ ուզում է մնալ, — ո՛չ, այլ այն աշխատաւոր դատակարգը, որ ինքը առաջին և մեծ աղդակը եղած պիտի լինէր յեղափոխական գործին, ուրեմն և վաղուց ի վեր յեղափոխական շարքերի ձեռք տեղ գրաւած:

Մի կողմ թողենք այդպիսիների անգիտակցութիւնը, և հարցը այսպէս դնենք, թէ արդեօք յեղափոխական կուսակցութիւնները իրենց պրօպագանդան զանազան կուսակցական իրենց փոխադարձ յարաբերութիւններում չեն նպաստած այդ անվստահութեանը: Հարց է թէ կուսակցութիւնները իրենք փաստեր չեն տալիս չէ զոք ներքին, որպէսզի նրանք առանձնացած դիրք բռնեն և յեղափոխական շարքերից հեռու մնան:

Եթէ յեղափոխական պրօպագանդան գիտակցութիւն պիտի արթնցնի և մտքերի լուսաբանութեանը պիտի նպաստի, ապա նա շատ մեծ շահ չի կարող ստանալ, երբ հարկի և անհարկի, ամէն տեսակ որակիչ, ամականների է վիճում՝ իր հակառակորդ կուսակցութիւնների նկատմամբ:

Ո՛չ յեղափոխական գործը կշահի և ո՛չ էլ գիտակցութիւն կարթնաց, երբ միեւնոյն ժողովրդի առաջ կուսակցութեանց ներկայացուցիչները և նրանց պրօպագանդիստները իրարու կազմակերպութիւն կորակեն ամենատոկոսի ամականներով: Եւ հետեւանք այն է լինում որ իրաւ ժողովրդը ընկնում է շուարումի ձեռք, ո՛ր մէկին հաւատայ, ո՛ր մէկին հետևի, ինչպիսի միայն սկզբունքի և տաքսիկայի խնդիր չէ, այլ բարոյականի, վարկի, վստահութեան, — այն ինչ հենց այդ տեսակետով է, որ ունկնդիր ժողովրդի հաւատքը խախտւել է և գիտակցութիւնը մթնաշուկ, և այդ զլուսաւորապէս հակառակորդական պրօպագանդայի շնորհիւ:

Մեղադրիր չէդքին որքան որ կուզես, շանթեր արձակիր, ինչքան որ կցանկանաս, բայց չէ՞ որ երկու թշնամիներ նրա առաջն էք ներկայացել և իրարու անվստահութեան քուէ առաջարկել, իրարու վարկաբեկել ամենավատ գոյնեղով:

Ձեռք ասում որ կուսակցական պրօպագանդան չլինի՝ իր բարձրութեան, իր վսեմութեան վրան կանգնած. ընդհակառակը, այդ պրօպագանդան կատարեալ անհրաժեշտութիւն է. մեր խօսքը արտայայտութեան ձևի և առաջադրումն ու պատահի մասին է:

Կուսակցական պրօպագանդան շատ մարդավարի կերպով կարելի է առաջ տանել՝ կանգնելով կուսակցական սկզբունքների և տաքսիկայի վրան, այդ բոլորը ժողովրդի առաջը վերադնելով՝ որպէս մի գիտական թեզիս: Գաբուրովին ուրիշ է պրօպագանդայի այն ձևից, որ քնդգրկուած է մեր ձեռք, — այն է՝ հակառակորդին տապալելու և իր կուսակցական գործը առաջ տանելու համար, նախ հակառակորդը վարկաբեկել և նրան բարոյապէս սպանել, ամէն կարգի երեսակցական մեղադրանքներ նրա վրայ բարդելով:

Ինչից է յառաջանում այդ. մի թէ ուրիշ ժողովրդների ձեռք կուսակցութիւններ չկան, մի թէ նրանց ձեռք կուսակցական պրօպագանդան առաջ չի տարւում, դուրս է անելի խիստ կերպով, քան մեր ձեռք, բայց ինչո՞ւ նրանց ձեռք այդպիսի տեղ երեւոյթներ չկան, — շատ պարզ է, որովհետեւ նրանց ձեռք իրարու պրօպագանդան խախտելով էլ ու միտում և նպատակ չէ կայ:

Մեղանում ահագին վնասներ և կուսակցական տղեկութիւններ են յառաջանում միշտ նրանից, որ իրարու պրօպագանդա խանդարելու ձգտում կայ: Ուրիշ խօսքով՝ կուսակցական պրօպագանդայի ազատութիւնը մենք չենք ընդունում՝ իր բացարձակ իրաւունքի ձեռք:

Ասել թէ այդ անհամբերողութեան չարիքները մենք չենք տեսնել չենք ճաշակել, — դա սխալ կլինէր և ընդդէմ իրականութեան:

Արդ, քանի որ դրա աղէտները տեսնել և շօշափել ենք՝ ուրեմն ինչո՞ւ այլևս շարունակել, և այդ մասին միջոցներ չխորհիլ:

Եւ ահա՛ հենց այստեղ է որ հրամայական և միանգամայն առօրեայ պահանջ է դառնում կուսակցութեանց աղատ պրօպագանդայի համերաշխութեան գաղափարը՝ սկզբունքային և տաքսիկայի տեսակետից:

Իրարու պրօպագանդան չխախտելու և փոխադարձ յարաբերութեան մի այնպիսի պայման է, որ ուրիշ ազգերի կուսակցական այդ հարցը արդէն վճռել և առօրեայ կեանքի բաժինն է դարձրել: Մենք այդ կողմից դեռ շատ յետ ենք մնացել, և

իր արու արօղապան դա խան դարելը, դժբախտ արար, կուսակցական առաքել ինքնին երբ համարուծ: Ու երբ այդ առիթով անհաշիվ արտաբերական ծաշալուծ ենթ, ուրեմն ինչու արդ նկատմամբ կամոնական մի տրամադրություն չձեռնարկել և փոխադարձ համերաշխության չգալ:

Որպեսզի մեկ մեկու պրոպագանդան խանդարելուց յառաջացած չարքների առաջն առնենք, առելի լա է երկիրը և ժողովուրդը մասերի բաժանելը, — ծուռում են ոմանք: Եւ ճարտահանութիւնից յառաջացած այս հնարագիտ միջոցի կիրարկման հետևանքն էր, որ երկար ժամանակ, Կովկասի մէջ, կուսակցական բաժանումները եղել էին զետեքով, լեւնեքով և ձորերով: "Դեռի աջ կողմիցները ձերն են, ձախ կողմիցները մերն": Եթէ իրարու օգտմանից անցնելու լինէին, այն ժամանակ կրակը և արիւնն էր, որ պլախ խօսէին: — Այսպիսի պայմաններից կուսակցական կամ յեղափոխական զիտակցութիւն կարծես, թէ, ընդհանրապէս, ինքնատրանսֆորմիւն կյառաջանայ, ի հարկէ ինչպիսի փայ նայելով յառաջադիմութիւն ստեղծագործող պայմանների առկայութիւնը:

Եթէ բաժանման միջոցը ընդունելու լինէինք, այն ժամանակ իր տեսակի մէջ մի նոր օրինակ ժողովրդական տեղափոխութիւն պիտի կատարուէր: Օրինակ, Կիլիկիան վիճակուած է այս ինչ կուսակցութեան, այն ժամանակ Վասպուրականի մէջ այդ կուսակցութեան մարդիկը կամ այնտեղ պիտի գաղթէին, իրենց կուսակցական դաւանանքի աղաքողութիւնը վաշտելու համար, կամ ուրիշը է դաւանաւոր լինին: Միջին դարերում դեանից տարբեր էին ծուռում: Վիեննայի Կոնգրէսին մէջ (1815), երբ վիճաբանները իրենց մէջ էին բաժանում ժողովրդներին և ազգերին, առանց նրանց կամքի հարցնելու, նրանք այլապէս չէին ծառայում իրաւունքի մասին:

Եւ 20 տարի յեղափոխական կեանք ունենալուց յետոյ կուսակցական պրոպագանդայի կատարեալ ազատութեան մասին համերաշխութիւն չլինելը, — դա ինքնին արդէն մի շատ մեծ գովական փառք չէ մեր քաղաքացիական յատկութիւնների համար:

Երբ իրարու պրոպագանդա խանդարելուց ծուռում չարքները շատ են թէ՛ արտասահմանի, թէ՛ Կովկասի և թէ՛ ծաղկատանի մէջ. ուրեմն վերջ գնելու համար ինչու փոխադարձ հասկացողութիւն չլինի, այդ կէտի մասին ինչու համար համեմատ շիտակաւ տրամադրութիւնն էր չձեռնարկել: Դիմե՛ անկարելի է այդ, և ինչու:

Առօրեայ կեանքի մէջ փոխադարձ օգնութիւնը թէև ոչ մի դրական օրէնքով ձևակերպուած՝ բայց լուրջապէս պարտականութիւն է համարուած պարսաճանաչ բոլոր ընկերակիցների համար: Նոյնը ինչի՛ չափով լինի և՛ կուսակցական կեանքի մէջ:

Գերմանական, ֆրանսիական, և այլն, Սոցիալիստ կուսակցութիւնները ընկերական այդ պարտաճանաչութեան գեղեցիկ օրինակներ են. տուել: "Նրանք" իրենց պայմանների ներածին չափ՝ նկատաւէս և բարոյապէս միշտ օգնել են ուրիշ երկրների ընկերներին, նրանց՝ որոնք պայքար են մղում համանման նպատակների համար:

Ցածկա-Հայաստանում: Գործող կուսակցութիւնները ինչքան որ իրենց հեռուոր նպատակների մէջ իրարուց տարբերուին, որոշ է որ իրենց մտաւոր նպատակների մէջ նրանք իրարու շատ մօտ են կանգնած: Սուբստանական բռնապետութեան լուծի խորտակուած բոլորի էլ անմիջապէս գործն է, ուրեմն և՛ դա էլ կազմում է մեր ճեղքման, շօշափման այն կէտերը, ուր կուսակցութիւնները կարող են համեմատ շիտակաւ և թող չտալ որ ամէն ինչ

պատահականութեան մնայ: Ոչ թէ որ և է՛ արդեւ չի կարող լինել և՛ անհիմար փոքր լայն խորհողի համար: Ինչ թափան, բարոյական և ֆիզիքական փոխադարձ օգնութիւնը կուսակցութիւնների միջև հանդիսանում է կատարեալ մի պարտականութիւն:

Այն ժամանակ երբ մեկը զարկում է բռնապետութեան դրածոներին դէմ, միւրը ինչու օգնութեան չհասնի՝ որպէս պարտականութիւն: Եթէ մեկը կարող է ոչ միայն և՛ զիջուք, մի ուրիշ կուսակցութեան բարոյական աջակցութիւնը կարիք ունի՝ նրան այդ դէպքում չաջակցել, խանդարել, որին ծառայութիւն մատուցանել կլինի՝ սուբստանականութեան թէ յեղափոխութեան: Վտանգում յեղափոխականը, ամբողջ խմբի և վայրի, երբ մի ուրիշ կուսակցութեան ֆիզիքական և նիւթական անմիջական ձեռնառնութեանը կարիք ունին՝ օգնութեան հասնելը անհրաժեշտութիւն չի ներկայանում:

Ի հարկէ կուսակցական նեղ շահի տեսակետից մտածելով՝ դուք առաքելութիւն համարուէր այսպիսի դէպքերում չէրդք, անտարբեր մնալ, երես շատ տարբեր և չտեսնելով զարկը — բայց ո՛վ կլինի՝ դրանից առաջին տուժողը և օգտուողը:

Սրանք լայնախոհ կուսակցականի համար մեր ճեղքման, համեմատ շիտակաւ անհաշիվ պայմաններ են, որ անստեղծ անկարելի է:

Ռազմական, մարտական և տեխնիքական այլ նախապատրաստութիւնների մէջ ինչու համար իրարու աջակցութիւն չանել, — մի անհիմար և բնական արդիւն ոյժով գոյի բերելու այն տեսակի ձեռնարկները, որ միայն մի կուսակցութեան ոյժով վեր կարող էր լինել և՛ հազարն ծախքերի էլ կարօտ, միջոցաւ հաւաքական ոյժով այդ բոլորը աշխարհի հիմունքների վրայ հնարաւոր կլինէր դնել, որ բոլորն էլ օգտուէին որոշ չափով, և զերծ մնային աւելորդ ծախքերից:

Այնտեղ ուր փոխադարձ ձեռնառնութիւնը անհրաժեշտութիւն է դառնում և Յեղափոխական Գործը աշխտեղի վաստակ ունի, ինչու չհամերաշխել:

Չէինք ցանկանալ ինչի՛րը երկարաշնչ և մանրամասնութեանց մէջ մտնել: Դեռ վերջին եղրակցութիւնն այն է, որ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏՐ և ՀԱՅԱՍՏԱՆԻ աշխարհադրական դիրքը, ինչպէս և հայ ժողովրդի ընդհանուր վիճակը, կուսակցութիւնների ամէն կողմեր ջրում և՛ տարածում լինելը — այդ բոլորը համերաշխական Դաշինքը կենսական պայման են դարձնում մեր Յեղափոխական Գործի յաջողութեան համար:

Քաղաքական կուսակցութիւնները շատ լաւ կարող են իրենց ուրոյն կազմակերպութիւնները պահել, կանգնել իրենց զիտակարիք սկզբունքների վրան անշեղ կերպով, և դրանք երբեք արգելք չեն, որ նրանք յեղափոխական տեսնիք աւանդական ինչի՛րն էր ու՛ և՛ ձեռնարկներ ու՛ իրարու հետ չհամերաշխին և կանխապէս ընդհանուր հասկացողութեան չգան մի քանի էական խնդիրների մասին:

Գանգատում ենք, որ ահապէս թիւ չէրդքների կայ, վրդովում ենք որ պէտք եղած աջակցութիւնը ժողովրդական խաւերից չի տրոււմ, յուզում ենք որ շատերը ապարելից հեռանում են, հոգեկան առանձին ուղիքում ենք ենթարկում, երբ յուսակաւոր ճաշկա-Հայ ժողովուրդը թողնում է ամէն բան և՛ "Շոր հոգին" առած փախչում է այն երկրից, ուր թողնում է իր սիրտը և ուղեղը: Եւ ինչու այդ, միթէ հայ ժողովրդին պակասել է համերաշխութիւնը, զիմացումութիւն, զիմացողութիւն: Ոչ: Պատմութիւնը այնտեղ է ապացուցանելու համար, որ այդ ժողովուրդը երբ կաթէ ջիղեր է ունեցել դէմ դնելու այն բոլոր հալածանքներին և դժուարութիւններին, որ պատմական ճարտարները իրեն առաջն են կանգնեցրել:

Մի ժողովուրդը ճեռնում է, և պատմութիւնը այդ որոշակի ցոյց է տուել, երբ նա դադարում է ընդհանրական, հաւաքական մի իղէպ, մղիչ մի գաղափար ունենալուց: Առանց ներքին ձգտումների, առանց մղիչ գաղափարների գոյութեան՝ մի ժողովուրդը լքանում, ծիրում է, և երբ այդ բոլորները գալիս են, մահը դառնում է անխուսափելի, և ամէն ինչ դառնում է միայն ժամանակի խնդիր:

Ինչո՞ւ է հայ ժողովուրդը գողթում: Շատ, պարզ է, կարգապէս երկրից գրուած արինաշունչ նաճակները: Նրանք որոշ կերպով ասում են այն, ինչոր գիտակից յեղափոխականի համար դեռ շատ վաղուց գաղանիք չէր:

Նաճակները կարուկ և անսքող կերպով ասում են, որ գաղթող վայրերի ժողովուրդը մինչև ցարդ իրեն պահող և զօրապետող միակ յոյս որ ունէր, դա Յեղափոխութիւնն էր. այդ յուսով էր նա ապրում և ամէն զրկանքների դիմանում: 1894-ին, 1895-ին, 1896-ին սուլթանական հայաջինջ մեքենայութիւնները աւելի սխտեմատիք և խիստ էին, քան, համեմատաբար, այսօր: Եւ սակայն այդ թուականներին ժողովուրդը կոտորուիլը, ճորթուիլը անգամ աչքի առաջն առնելով շարունակ՝ չուզեց գաղթել, և մի հրաշալի առնակ կ'անուծէր նա դիմացաւ: Բնաւորութեան այդ գիծը մեր ժողովրդի պատմական այն հոյակապ ոգին էր, որ նա երևան էր բերել յաճախ, երբ պատմական ընդհանրությունները նրան կորստեան փորձանքի առաջն էին կանգնեցրել:

Դրանով հայ ժողովուրդը, որպէս պատմական անհատականութիւն, ցոյց է տուել իր գոյութեան իրաւունքը, և յարգանքի դափնիներ խլել թշնամիների կողմից, և նրանց ստիպել է խնարհել իր կուլտուրայի առաջ, ու այդպիսով յաղթանակից նա յաղթողի դերի մէջ է մտել ու իր գոյութիւնը շարունակել:

Մի՞թէ դա միևնույն ժողովուրդը չէ: Ինչո՞ւ է, ուրեմն, նա խուճկանում՝ չորս կողմից բարձրացած կոշի և աղաղակների հանդէպ, ու տուն-տեղ թողնելով՝ լալտ աչքերով, հապճեպով պառսպարան է փնտռում օտար երկրներում: Եւ գաղթողը նոյն իսկ անգիտակից չէ այն սև բախտին, որին ինքը պիտի արժանանայ հեռաւոր վայրերում. բայց և այնպէս նա գնում է, և գնում է աճապարելով: Ինչո՞ւ:

Պարզ է, նաճակները գրուած ձեռնհաս ընկերների կողմից, դրական կերպով ասում են, որ գաղթող ժողովուրդը այլ ևս յոյս չ'ուրեւ է յեղափոխութիւնի:

Ինչո՞ւ է այդ ժողովուրդը յուսահատուել յեղափոխութիւնից. այդ էլ պարզ է: Նա իր աչքերով տեսնում, շուտով է ամէն մի կուսակցութեան ոյժը և գործը առանձին առանձին վեր առած: Դժուար չէ այդ տեղից այն անմիջական եզրաւորութեան գալը, որ ամէն մէկը դատ դատ վեր առած, եթէ չասնեք ոչինչ, կարող ենք ասել, որ շատ քիչ բան կարող է անել, ուրեմն և անկարող սպասուած դերը խաղալու:

Դրա վրայ գալիս բարդում են կուսակցական դայթակութիւնները և չարիքները, որ կատարում են իր իսկ աչքի առաջ:

Եւ երբ այդ տանջուող ժողովուրդը, Խնդրոյ առաքական ինքը, իր ամէնօրեայ տանջալից աչքերով տեսնում է իր առաջ ո՛չ միայն անհամապատասխան ոյժ, այլ իրարու ջլատողներ, իրարու չէզոքացնողներ, իրարու հետ հակադրաշխարհներ՝ նոյն իսկ ամենակենսական խնդիրներում—այդ պէպքում, ահա, երբ նա փշրում և անգոր է տեսնում իր միակ կուսակցը, իր միակ "ապաւէն"ը, իր միակ յոյսը՝ յեղափոխութիւնը, այդ ժամանակ տիրում է յուսահատութիւնը, լքումը, որին և՛ յաջորդում է դրամայի վերջին արարումը՝ արտագաղթը:

Եթէ հայ յեղափոխութիւնը պէտք եղածին պէս առաջ չի գնում, եթէ ժողովուրդը լքում, յուսահատ դուրս է փախչում — այստեղ որոշ պատասխանատուութեան մի մեծ բաժին ունի կուսակցական անհամբաւածութիւնը կուսակցութիւնների չափազանց կղզիացած դիրքը:

Իրերի այդ անմխիթար դրութիւնը մեր և մեր ընկերներին աչքերից երբէք չի խուսափել, և ահա՛ թէ ինչու համար, հայկական Խնդրի տեսակէտից, հայ կուսակցութիւնների համերաշխութիւնը մենք ի վաղուց անտի, ո՛չ այսօր, այլ 1899-ից ի վեր, համարած ենք բացարձակ մի անհրաժեշտութիւն:

Համերաշխութիւն հայ կուսակցութիւնների միջև,—դա այն բնական ուղին է, որով անպատճառ պիտի անցնին այդ կուսակցութիւնները, եթէ ուզում են ծածկա-հայ Յեղափոխական Դործին բաւարար լուծումի բերել: Հակառակ դէպքում՝ տուժողը դարձեալ իրենք պիտի լինին, եթէ կիսատ ճանապարհին մնան:

Այդ տեսակէտից մեր կուսակցութեան և վերակազմեալ Հնչակեան կուսակցութեան միջև կնքուած "Համերաշխական Դաշինք"ը մենք կարող ենք նոյն իսկ օրինակելի համարել: Պէտք եղած ամէն արամադրութիւններ մանրակրկիտ կերպով կանոնադրուած, որոշուած են՝ որպէսզի Համերաշխական գործը իմաստի, բացատրութեան և գործունէութեան մէջ որ և է թիւրիմացութիւն առաջ չբերի: — Երկու կուսակցութիւնները ո՛չ միայն իրենց կուսակցական կազմը և ինքնուրոյնութիւնը պիտի պահեն՝ ազատ իրենց սկզբունքները պրօպագանդայի մէջ, այլ նրանք իրարու նիւթական, բարոյական և ֆիզիքական ամէն աջակցութիւն պիտի տան՝ թէ՛ երկրի և թէ՛ արտասահմանի մէջ՝ այն ամէն պարագաներում, երբ յեղափոխական ձեռնարկ և յեղափոխական գործ կայ:

Եւ մեղ համար հոգեկան մի առանձին հրճուանք պիտի լինի տեսնելը, որ միևնույն հրապարակային ժողովի մէջ Հնչակեանը կ'ընի իր հայեացքները Հայկական Խնդրի և ծածկա-հայ յեղափոխական գործի մասին, իսկ վերակազմեալ Հնչակեանը՝ իրենը: Այդ տեղից յառաջ եկած լուսաբանութիւնները չէ թէ ունին դիտակցութիւնը կմթագնացնեն, այլ նրան աւելի լաւ միջոց կտան խնդիրները ուսումնասիրելու և ըստ այնմ իր դիրքը որոշելու և կուսակցական շարքերի մէջ իր տեղը գրաւելու. — իսկ դրանից անմիջապէս օգտուողը կլինի Դործը, Յեղափոխութիւնը, որ երկու կուսակցութեան համար էլ միջոց է թուրք Բռնակալութիւնը խորտակելու և հայ ժողովրդի ազատագրութիւնը խլելու:

Ս. ՍԱՊԱՆՆԻՍԻԱՆ

ԴԵՌ ՉԵՆՔ ՊԱՐՏՈՒՆԵԼ

Պէտք չէ վհատիլ. երբէք, ընկերներ, Դեռ մերն են դիրքեր, կռիւն չենք տարուել, Իզուր են կարծում վարձկան դահլիճներ, Մարտի զէնքերը դեռ չենք վայր դրել: Այո՛, չենք պարտուել, երբ կան դեռ զոհեր, Երբ մարտիրոսներն ծիծաղկոտ, հպարտ, Երբ վազում են դէպ զոհարաններ. Երբ համարհելով բանտ ու շղթաներ, Որպէս հարսանիք, գնում են աքսոր. Եւ շղթաների խուլ ուռնոցներին Ըմբոստ երգերն են պատասխան տալի: Այո՛, չենք պարտուել, երբ արեան երգին "Մահուան վճիռ"ն է արձագանք տալի:

Երբ սուրբներին միայն յոյս դրած,
Ձանում են կաղնե ջարդ ու կտորած:
Այո՛, չենք պարտուել, երբ մեր դահլիճներ
Վաղածամ ճահիջ սարսուռ զգալով,
Փակուել են իրանց սպարանքներում,
Եւ անգոր գահին՝ միայնակ, լքուած,
Սեւ հարկերեակներ պաշտպան են վարձել:
Ո՛չ, դեռ չենք պարտուել, երբ կարծիր վաճախը
Տալիս է նշան—կաղնե՝ պաղրոմ ներ,
Երբ դեռ հնչում է բողբոջ՝ աղաղակ,
Անէծք են ժայթքում բեր անմեղ զոհեր:
Այո՛, չենք պարտուել, երբ խարխուլ գահի
Չինանշանն է— պատրոն՝ ու մարակ:
Միակ պարծանքը՝ սեւ հարկերեակներ
Եւ արիւնարբու խուլիգան կողակ:
Երբ մեր աւերերն են՝ գող ու աւաղակ:
Եւ դրանց զիծայ՝ բոճբերն շանթարձակ:
Եղէ՛ք անվշտ, արի ընկերներ,
Դեռ մերն են զիբեր, կռիւն չենք տարուել:
Իզուր են կարծում վարձկան դահլիճներ,
Դեռ շանթ զենքերը մենք չենք վայր նետել:

1907 թ. հոկտ. 31

ԷՄԻՆ

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՆԱՄԱԿ ԿԻԼԻԿԻԱՅԻՑ

Ալեքսանդրեան գտնուող բէտիֆները վերջապէս պաշտօնական զգեստ հագան: Եւ մէկ երթարու խօսքը կարծես թէ վերջ է դրած. քաղաքը այժմ բոլորովին փոխուած կերևի: Բէտիֆներէն 300 հոգու չափ մէթորթ-եօլ են փոխադրուած, իսկ մնացածները դեռ քաղաքին մէջն են:

Ըստ նոր հրամանի՝ Ալեքսանդրեանի մէջ գտնուող զօրքերը աճէն օր զինավարժութեան և նշանակութեան կերթան, պատերազմափորձեր կանեն. տեսակ մը անհանգստութիւն կայ, կարծես թէ աճէն լրացել կ'ախտը արտաքին թշնամիի մը ներս խուժումէն: Զօրանոցը որ երկար ժամանակէ ի վեր կ'իտասա մնացած էր, այժմ լինցած է և քաղաքին շրջակաները փոքրիկ ամրութիւններ կ'առուցուին: Քաղաքի ամբողջ հասարակութեանը այս բոլոր անցուղարձերը վարձանք կ'աւտաճառեն, սրովհետեւ այսպիսի շարժումներ և իրարանցումներ առաջ չ'կային:

Կառավարական խտտութիւնները աճէն կողմեր զարհուրելի չափեր առնելու վրայ են: Ձմռանամ յիշել, որ Կիլիկիայի ժողովուրդը մեծ օգնութիւն մը կ'ապասէր Լահէի ժողովէն: Այժմ ընդհանուր յուսախաբութիւն կայ, երբ տեսան թէ այդ ժողովը կատակերգու շահագործողներու ժողով է եղեր, ուրիշ ոչինչ:

Առկէ մօտ ամիս մը առաջ 2000 տոն մուհաճիրներ եկան և, կառավարութեան որոշմամբ, տեղափոխուեցան Սսի շրջակայքը: Այդ իրողութիւնը բաւականին նշանակալից է: Թուրք տարրը Կիլիկիոյ մէջ օր ըստ օրէ կ'ընդամենայ առ այժմ թուրք գաղթականներու հոսանքը դէպի այս կողմերն են ուղղուած:

Մեր դժբախտութենէն՝ լրտեսներ թիւը այս կողմերը չափէն աւելի շառցած են: Մասնութիւններն անպակաս են. իրենց պատառ կողմերը համար այնպիսի երեւակայական պատմութիւններ կ'ստեղծեն այս թշուառականները, որ մարդ չգիտէ թէ արգահատի տանց վրայ թէ սուր բարձրացնէ:

Այս կողմերու լրտեսներուն ընդհանուր հրամանատարը և ղեկավարիչը յայտնի հրէշ Յարութիւն էՖէնտի Քէքլիքեանն է. այս դաւաճանի արարքը աճէն չափերէ անցաւ, ամբողջ ժողովուրդը սարսափի մէջ է դրեր: Այս հրէշը՝ անցեալ ամբան՝ պաշտօնով կը շրջապայէր Սիս, Հաճըն, Զէյթուն, Այնթապ, Հալէպ. . . ալ ինչե՛ր չըրաւ. քանի՛

քանի՛ տուններ չքանդեց: Հալէպի հայ բանտարկեալներու միակ պատճառը այս մասնինն է եղած:

Ամիսէն աւելի կայ, որ Կարմիր-Գաղանի այդ գործիքը Կիլիկիայէն դուրս է եկեր, չգիտցուիր թէ ո՛ւր է կորեր. ժողովուրդը սարսափի մէջ է, կ'արձէ թէ այդ վատը իր գլխուն մի մեծ փորձանք պիտի բերէ: Շատերը այն կարծիքն ունին թէ Հայֆա՝ Սաճի պէկին քով գացած է: Շատերն ալ կարծիք ունին թէ արտասահման անցեր է յեղափոխական անձերու և կազմակերպութիւններու վրայ հակելու՝):

Հարկահանութիւնը, հարստահարութիւնը հետզհետէ անտանելի դրութիւն կ'ստեղծեն ժողովրդին: Թշուառութիւնը, աղքատութիւնը ընդհանուր է:

14 դեկտեմբեր 1907

ԿԻԼԻԿԻԱ

Կիլիկիա

ՆԱՄԱԿ ՍԵՒ ԾՈՎԻ ԹԻԳԱԿԱՆ ԱՓԵՐԻՑ

Այսպիսի մը վերջին տոններու հանգամանքները թոյլ չտուին մանրամասն տեղեկութիւններ տալու մեր կողմերը պատահած դէպքերու և կատարուածներու մասին: Սակայն լուսնինէս չի կարելի հեռեցնել, թէ աճէն ինչ խաղաղ վիճակ ունի: Սուր, հալածանք, ճնշում, հարստահարութիւն՝ ասոնք առօրեայ բաժինն են հայերու: Կեանքի և գոյքի անսպասելիութիւնը այժմ աւելի խիստ չափեր է առած՝ քան նախորդ տարիները: Այժմ, անխտիր, աճէն մարդ ճանաչուցած է կեանքէն: Այսպէս չի կրնար լինել, երբ տխին պոլար աւելի յարգ և արժէք ունի՝ քան հայունը: Եւ մեր այս սասանները թող երբեք չափազանցութիւն չթուին՝ արտասահմանեան մեր ընթերցողներուն:

Տանք քանի մը փաստեր:

Տեղացի հայ կառավարատէրին մէկը որ նախապէս թուրք վարձակալի մը խնամակալութեանն էր յանձնած իրեն մէկ կալուածը, հայ գիւղացիի մը կտայ՝ շահագործելու համար. ժամանակ մը անցնելէ յետոյ՝ նախորդ թուրք վարձակալին ջիղերուն կիլիկի թէ ինչ ո՛ւր համար կ'եւ վճար մը օգտուէր անկէ և ո՛չ թէ ինքը, չէ որ նոր վարձակալին գալովը՝ ինքը զրկուէր էր ճրի ապէս իր վայելածէն: Եւ ահա՛ նախ կ'ապառնայ հայ կառավարատէրը, և անոր բան մը չլինալով ընել՝ կ'իմռէ խնդրը փակել հայ վարձակալին սպանութեամբը: Գիշեր մը քանի մը ընկերներ իր հետ առնելով՝ հայ վարձակալին տունը կ'երթայ, կ'առաջարկէ իրենց ընկերանալ մինչև մերձակայ գիւղը՝ ճամբայ յոյց տալու պատրուակով: Խեղճ հայը չկրնար երևակայել իրեն համար լարուած ծուղակը, և բարեմտարար կ'առաջարկէ իրեն եղած առաջարկը, քանի որ անոր և թուրքին մէջ որ և է գրծութիւն և անհամոթիւն պատահած չէր անցեալին մէջ: Հայը խորհելով որ իր հիւրերը հեռաւոր տեղերէ կուգան և կրնան անօթի լինել՝ իր հիւրասիրութիւնը և ասպնջականութիւնը կ'առաջանէ անոնց: Եւ մարդասիրական իր պարտականութիւնը կատարելէ յետոյ՝ կ'եկէ և կուղկցի իւր հիւրերուն: Գիւղէն բաւականին հեռանալէ յետոյ՝ անգութները չարաչար մահով սրախողխող կ'ապանեն հայուն: Հետեւեալ օրը դէպքը յայտնի կ'լինի մերձակայ կառավարութեան: Դրացիներուն, կնոջը և զաւակներուն վկայութիւնովը ոտիկաններ կողարկուին հետապնդելու համար չարագործներին: Ոճրագործները կ'առաջարկուին. անոնց զգեստներուն վրայ պարզ կտեսնուին դահլիճ արեան հետքերը: Աճէն ինչ կ'ստատուէր: Այսուհանդերձ միտորը և ուրիշ քանի մը կարեւոր պաշտօնեաներ միայն 10 ոսկի կաշառք առնելով՝ և քանի մը օր բանտելէ յետոյ՝ զիրենք ա՛ն պարտ կ'արձակեն. չէ՛ որ հայուն արիւնը 10 ոսկիէն աւելի չէր կրնար արժէլ: Այս դէպքը ամբողջապէս՝ իր յարակից բոլոր մասերով՝ կը տեղեկացուի քաղաքի կառավարութեան, վիլայէթին և նոյն իսկ Պոլիս: Արդիւնքը սա կըլլայ միայն, որ բաւական քանակութեամբ դրամ ալ քաղաքի պաշտօնեաները կ'արդեն երկու կողմերէն ալ, ու հայուն արիւնը կ'երթայ ի դուր և չարագործները կ'մնան անպատիժ, որոնք այժմ աւելի յոխորտալով կ'ըսեն:

*) Մեր տեղեկութիւններն Նայելով այդ էֆէնդին այժմ Նոքաթտունն է. եւ իր դերի մէջ:

Օրերս քանի ճը վնեալ թուրքեր քաղաքէս հասի 2 ժամ հեռաւորութիւն լոնկոյ թաւանին քարեկեցիկ կարծուած հայ գեղացու տունը կմանեն լոնի և անկէ մեծ քանակութեամբ դրամ կապահանջեն սպառնալովքով հայր կաղաչէ, կաղաթէ, բռնալ որ ինքը այդքան դրամ չունի և չի կրնար տալ: Թուրքերը անդորոտէի կման: Խեղ ք կուրայ, կապաղաւէ, խնդրելով որ իրեն դէժ պայմանաւած մը տան: Դա հիմները անդորոտէի կման: Ծանր կկողտաւեն և ապա շարաշար մահալ վնեք կապանեն: Երեսնաործութեան հէ վնեակները կճանջուին: Կառավարութիւնը վերենք կհերքապաղէ և կկորիկի քրմար ճը կաշառք առնելով կարծակէ պատ. չէ որ ճի կողմը հայ էր և միւս կողմը դրամ կար:

Կանք դէպքեր և իրողութիւններ են, որոնց մէջ է որ կշարունակուի մեր կեանքը: Սուլթանի բարեխնամ կառավարութեան կառայականութիւններուն և շահատիրութիւններուն ցանկը ճիճէ կարելի է տալ:

Հայ ժողովուրդը, ղգբախաւարք, դեռ հհասկացաւ թէ Սուլթանի դատարանները դիմելէ որ և է օգուտ չկայ, ուստի իր փրկութիւնը պիտի որոնի միայն ինքնապաշտպանութեան մէջ: Եւ փոխանակ կազմակերպուելու փոխանակ զիսակցաբար կհշուէրու մի որոշ նպատակի համար կընդի տուն ու տեղ, կաղաթի տըրէք երկրներ:

Կաղթականութեան հոտները հեռոհհեռէ աւելի ծաւալուն հանգամանք կառնէ: ղգբախաւարք, այնպէս որ եթէ ժամանակ ճը այսպէս շարունակուի, գուցէ երկրի մէջ այլևս հայ չմնայ:

Եւ այս ախար հեռաւորակերը ոչ նուազ մտահոգութիւն կպատճառէ յերասխականներուն:

Թուրք կառավարութիւնը շտա մեծ հրճուանքով կլիտէ հայ ժողովրդի այս կործանելէ ընթացքը: Թեւ այդ ծախն, դրամ կորցելու համար, սկզբնական ֲգեաւորութիւններ յարուցանելէ ալ ետ չի կենար:

Սենք կողմանք և կրտապարտներ հայ ժողովրդի այս ընթացքը: Բայց ինքը կհատցնէ թէ արդեօք մենք յեղափոխականներն նուազ բաժնի ստեղծած ենք այն դրութեան մէջ:

Վերջին տարիներու ծանր ցոյցերը ահռելի հեռակամք ունեցան և ճիճէ անոնք նուազ փութացուցին այս քայլաշարը:

Ժողովուրդը շատ երկար ժամանակ այն անխաղաղութիւն ունէր, թէ յեղափոխական ոյժը վերջապէս իրեն օգնութեան պիտի գար և վերջ տար իր ցաւերուն, բայց երբ տեսաւ այս ցոյցերու փառախաղաղութիւնը և յեղափոխական ոյժերի ոչ միայն բաժան բաժան, այլև իրարու չհարգանքով ուղղութեամբ գործելը, անտեղ հհամեմաշիւնը, ալ յուսահատութեամբ, որոհեալ այն համարմանը եղաւ, որ առանձին առանձին գործերով անկարելի պիտի ըլլայ ընդհանուր և եղափոխութիւն յաւաքայնել և աղաղակով դրական արդիւնքի ճը յանդի: Եւ ահա այդ իրերու դրութիւնն է, որ երկրի զաղթութեքը կճառնանչեն երբ մեր յանդիմանութիւնները և յորդորները կլսեն:

Անցեալին մէջ շատ տուեղներ: փորձով ինչու չըհհասկացանք, որ ժողովրդի ղգբախաղաղութեան պատճառներէն մէկն ալ անտուկա և անծանախակից գործունէութիւնն է:

Երբ արտապահանքի թիւթերը արտագաղթի դէմ կաղաղակեն, ինչու չեն մտածեր, թէ այդ չարիքի սատարողներէն մէկն ալ իրենք են: Իրենք ալ համար ալ աղաւախալի, անհամար ջրատու գործունէութեամբ: Այս իմ կարծիքը չէ, այլ այն ժողովրդին: որի հետ խօսած և հակաճառած եմ:

13 դեկտ. 1907 ՓԵՅԼԱԾՈՒ Փոքր-Հայք

ՆՈՒՒՐԱՏԻՈՒԹԻՒՆՆԵՐ

ՌՈՒՍՃՈՒԳԻ Մամաճիւղի գանձարանում ստացուել են 1907 Յունիսից մինչև Օգոստոս, հետեալ: գումարները.—

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԽՈՒՄԱՐԻՆ.— Խմբապետ չախուսի 6, Ե. Յ. 12, Մ. Մ. 12, Օ. Մ. 6, Ա. Յ. 1, Յ. Մ. 36 ֆրանք:

ՆԵՑՈՒԿ ԽՈՒՄԱՐԻՆ.— Դ. Լ. 3, Ե. Կ. 3, Ղ. Մ. 4, Խ. Մ. 3, Կ. Գ. 2, Յ. Փ. 2 50, Մ. Մ. 1 ֆրանք:

ԱՐԺՈՒ ԽՈՒՄԱՐԻՆ.— Ռ. Ե. 3, Գ. Մ. 4, Ռ. Մ. 2, Խ. Մ. 3, Գ. Բ. 3, Մ. Մ. 2, Դ. Մ. 3, Գ. Մ. 2, Կ. Մ. 1 ֆրանք:

ԱՆԼԵՏ ԽՈՒՄԱՐԻՆ.— Յ. Մ. 4, Ե. Յ. 5, Գ. Մ. 4, Գ. Բ. 3, Գ. Յ. 3, Բ. Մ. 6, Ա. Մ. 5, Թ. Գ. 5 ֆրանք:

ՄՈՒՐՈՑ ԽՈՒՄԱՐԻՆ.— Ա. Յ. 5, Դ. Մ. 5 ֆրանք:

ԿԼԵՌԿ ԽՈՒՄԱՐԻՆ.— Փ. Մ. 4, Զ. Դ. 4, Լ. Գ. 3, Ա. Կ. 4, Ղ. Մ. 4, Մ. Մ. 1, Ե. Յ. 1 ֆրանք:

ԴՈՐԺԱՆՈՒՄ ԽՈՒՄԱՐԻՆ.— Ռ. Մ. 7, Ա. Դ. 7, Մ. Գ. 7, Գ. Մ. 7, Դ. Մ. 7, Ա. Յ. 7, Ե. Մ. 7, Ա. Մ. 7, Մ. Դ. 7, Գ. Փ. 7, Ա. Մ. 7, Ն. Մ. 7, Ե. Մ. 7, Լ. Մ. 7:

Նուէր Դ. Լ. 1, Նուէր Նարանհայ առիթը 10, ֆրանք, մանր Նուէրներ 5 ֆ. 80 ամսով:

ԸՆԴՀ. Գումար 547 ֆ. 10 ամսով

ԳԵՏԱՐԱՆԻ Մամաճիւղի գանձարանում ստացուել են հետեալ գումարները.—

ՌԴՈՒՄԻ Խմբագ.— Լաւրամ Թէղոսեան 1, Ղշոտ Ողորմածեան 1 60, Կայմալ Ամիրջանեան 1, Եշխայ Սըշխըշեան 1 25, Սերուն Եղջիրեան 1 25, Ազատիկ Թափալկեան 1, վարդիկ Եղուարդ Մարտիրոսեան 1 ֆ. 75 ամսով: Զարդիկեան 75, Ժապիկ Ժիմոսեան 60, Հեմեք Դիւղացի 50, Մօսիկ Դիւղացի 50, Ծամրո շերտեան 60, Խաղիկ Մամուշարեան 50, Կուկու Յօրեան 75, Մաշին Գիւղացի 75, Զարմ Սիրաշար 75, Կումանց Ժերուսի 75, Կապուրդ Լեւո 75 ամսով: Գումար 16 ֆ. 90 ամսով

ՆԱԽԱՀԱՆԳԻՍ Մամաճիւղի գանձարանում 1907 Փետր. 12-ից մինչև Յուլիս 1-ը ստացուել են հետեալ գումարները.—

Մի գումար 1, Կարդեանք 10, Էրմաստ Խմբագ. Մայսի ամսացումար 15, Դարիկի Գործներէից 61, Մայիսի գործներէից 38 Դօշիսիկից 30, Համի Լեւոնի գործի ստիկի 25, Մարտիկից 10 Բ. շէնուր Կարսում ղէնքի դիմաց Երշակից 10, Մայիսի ապառիկ մուցած կործներէից 7, Խաւորնի ներկայացումից գուտ տրդիւր 375, Ազատամ Խմբ. ամսագրամագրներէից մինչև Մայիս 27 րուպի 50 կօպէկ:

Գումար 609 ր. 50 կ.

ԱՆԴՈՑԻ Մամաճիւղի ՄՈՒՐԱՑ ՄԵՄ Խմբը ստացել է Աղղային սնտուկից 250 դրամ:

ԴԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մրանով պաշտօնապէս յայտարարում ենք հայ Հասարակութեան, որ Հնչակեան Կուսակցութեան և Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան միջև, 1907 Նոյեմբեր 24-ից, « ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ԴԱՇԻՆԻ » է կնքուած, կարեւոր և էական բոլոր խնդիրների ծախին: Տաճկա-Հայ Աղատապրութեան Դործի մէջ միացեալ ոյժերով գործելու համար:

ՀՆՉ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹ-ԱՆ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԿԵՐ. ՀՆՉ. ԿՈՒՍ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ գանձարանում ստացուել են հետեալ գումարները.—	
ՍՕՓՈՒՅՈՒ	Մամաճիւղ
ԳՈՂՐՈՒՂՆ	200 " "
ԶԵՐՍԹԵՐՈՒՅՈՒ	712 " "
ԱՆԶԱՆԴԱՐՈՒՅՈՒ	60 " "
ՆԵՍՈՒՅԺ	15 60 ր.
ԸՆԴՀՈՒՄ Մուրաւի Ժնուսից հնչատաւ քաղ. քանդակիւրց 250 ֆր.	

M. BELLART — 7, Rue Campagne-Premiere 7, (France) PARIS.
Imprimeur-Gérant EMILE LEBÉE.